

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՈՐՈՇՈՒՄ թիվ 441340/04-Վ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿԱՆԵԼՈՒ ԵՎ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԹ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, ուսումնասիրելով 05.03.2021 թվականի թիվ \_\_\_\_\_ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 6981 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Ա/Չ Վարուժան Ավագյանը (ՀՎՀՀ 32451281, հասցե՝ ք. Երևան, Շարուրի 26, 30)՝ ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկը, ինչպես նաև ՀՀ Հարկային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի հոկտեմբեր ամսվա ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը, որոնց համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169<sup>1</sup> հոդվածի 2-րդ մասով:

Փոստային ծառայության միջոցով հետադարձ ծանուցմամբ կողմին ծանուցագիր է ուղարկվել՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն ներկայանալու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման և գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ, սակայն 20.01.2021թ.-ի դրությամբ ծանուցագրի ստացման փաստը հավաստող ապացույց առկա չի եղել:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի 20.01.2021 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Վարուժան Ավագյանի կողմից իրավախախտումը վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել է կրկին անգամ, (ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 09.10.2020թ. թիվ 427696/04 որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Նկատի ունենալով, որ ակտի հասցեատերը ի հայտ է եկել, հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34, 244<sup>2</sup>, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Վարուժան Ավագյանի վերաբերյալ հարուցված թիվ \_\_\_\_\_ վարչական վարույթը վերսկսել:
2. Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169<sup>1</sup> հոդվածի 2-րդ մասի Վարուժան Ավագյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ 62անկետ տուգանք 20.000 դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

 ՊԵՏԱԿԱՆՅԱՆ

Օանդություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն  
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության նպատակից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)  
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշում հանձնելու օրվանից հետո՝ երեսուցուց օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագործ մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է փոփոխվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:  
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին՝ 900005240487, վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:  
Տուգանք ընշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը \_\_\_\_\_